

ԱՅԻ ՄՈՂՈՔԵԼՈՒ

13291

ՍՊԻՏԱԿ

ԾԱԳԻԿՆԵՐ

891.99

5-27

Վելու գաղտնա և մասնակի
Անդրանիկ Մանուկյան
Բայկու, տպոգրաֆ օ Արցախ
ԹԱԴԱՐ ՏՊՀՐՈՅ ՏՐՈՒ

Հ պառակ
Ալեքսանդր-աց
ՄԻԳԱՅԻՆ, ՄԱՆՈՒԵԼԵԱՆ ՕՌՈՅ,

891.99

15-27

4-1

ՍՊԻՏԱԿ

ԾԱՀԻԿՆԵՐ

66176



2003

ԲԱԳՈՒ ՏՊԱՐԱՆ «ՏՐՈՒԴ»

3024

5537n

ՍՊԻՏԱԿ ԾԱՂԻԿՆԵՐ

(Պատմուածք իմ յիշաւակարանից)

Քսաներկու տարեկան էի, երբ առաջին անգամ սիրահարուեցի:

Ամառանոցումն էր:

Ես դեռ ալժմ էլ լիշում եմ, որտեղ պատահեցի նրան, ինչպէս ծանօթացանք և ինչ խօսեցինք:

Ես նրան տեսայ անտառում, սպիտակ ծաղկներից հիւսած պսակը գլխին:

Նա հազիւ 19 տարեկան կը լինէր. գունատ, նուրբ դէմքով: Երբ մեզ ծանօթացրին, նա մեկնեց ինձ իր փոքրիկ ձեռքը և ասաց.

—«Դուք սիրում էք սպիտակ ծաղիկներ» և, չը սպասելով իմ պատասխանին, աւելացրեց. —«Չէ ո՞՛ սպիտակ գոյնը ամենալաւն է»:

«Սպիտակ ծաղիկների թագուհի» —
այդպէս էին նրան ճանաչում այդ ամա-
ռանոցում:

Ես սիրեցի նրան, բայց նա մեռաւ...
—

Ես վճռել էի այլես երբէք չը գտ
այստեղ, այնքան ծանր լիշողութիւններ
են կապուած ալս ամտուանոցի հետ:
Ամեն մի անկիւն, ամեն մի ծառ ծա-
նօթ են ինձ, և լիշեցնում են նրան:

Հինգ տարի է անցել, բայց ինձ
թւում է, որ երեկ էր, որ ոչ մի օր չի
անցել, որ ես բոլորովին էլ չեմ հեռա-
ցել այստեղից, որ մի վատ երազ էր...
որ ահա թփերի միջից դուրս կը գայ
նա՝ սպիտակ ծաղկէ պսակը գլխին,
ժպտալով կը մեկնի ինձ իր ձեռքը և
կասի. — «Բարի լոյս, գնանք գէալի վեր» :

Նա միշտ սպիտակ ծաղիկներով էր
զարդարում իր գլուխը և այնքան սա-
զում էր նրան այդ, Այժմ նա մեռել է,
իսկ ես ոչ խելազարուել եմ և ոչ էլ
ինքնառպանութիւն գործել... Այժմ ես
մինչև անգամ լաւ չեմ լիշում նրա

գէմքը: Երբ ուզում եմ լիշողութեանս
մէջ վերականգնել նրա դիմագծերը, մի
վայրկեան կարծես պարզ տեսնում եմ
բայց ինչպէս մի վաղանցուկ երազ,
ինչպէս մի մետէօր, անհետանում
է անհունութեան մէջ, և ես զուր
եմ ճիգ թափում նորից լիշել. իսկ
երբ լիշում եմ՝ նա պատկերանում է
սպիտակ ծաղիկների մէջ, մարած աչքե-
րով, դագաղում:

Ես սիրում էի նրան, բայց նա մեռաւ.
Ես սիրում էի նրան, բայց չը սպա-
նեցի ինձ. իսկ այժմ այնքան մեղմացել
է այդ վիշտը, որ նորից եկալ այստեղ
լիշողութեանս մէջ վերականգնելու այն
ամենը, ինչ անցել է... անցել անգարձ:

Ես գիտէի, որ այսպէս է լինելու,
բայց ես ուզեցի կրկին ապրել այս տան-
ջանքներով. մարդ երբեմն իրեն
ստիպում է տանջուել, կասես այդ տան-
ջանքների մէջ միիթարութիւն է
գտնում:

Երբորդ օրն է, ինչ այստեղ եմ. մի

բան, մի գաղտնի ոյժ ինձ ձգում է դեպի նրա գերեզմանը, բայց ես վախենում եմ գնալ:

Այսօր էլ, երբ դուրս եկալ տանից, չէի մտածում գնալ, բայց ինքս էլ չը գիտեմ ինչպէս էի ընկել այնտեղ:

Նրա թաղուած տեղը շատ խորն էր տպաւորուել իմ յիշողութեանս մէջ. անգիտակցաբար ես հասել էի այնտեղին և երբ ուշքի եկայ, բարձրացրի զլուխս, նկատեցի, որ իմ տնկած ծառի տակ, որը մեծացել, իր հովանու տակ էր առել նրա գերեզմանը, նստած է մի աղջիկ: Նա ինձ տեսնելով բարձրացաւ, մեր հայեացքները հանդիպեցին, ես քիչ էր մնում ճշայի. ինձ թւաց թէ դա նա է, նրա ուրուականը:

Նա կարծես նկատեց իմ լուզմունքը, մի տարօրինակ հայեացք ձգեց ինձ վրայ և սկսեց իջնել:

Ես լուռ, քարացած տեղումս, հետեւում էի նրան աչքերով, մինչև նա ծածկւեց:

Նոյեցի շուրջս, ես մենակ էիս Գերեզմանի շուրջը սփռուած էին սպիտակ ծաղիկներ, այն ծաղիկները... նրա սիրածը: Ինձ թւաց թէ դա մի տեսիլք էր, մի երազ՝ և երազում ես տեսալ նրան. նա դուրս էր եկել գերեզմանից, այո... իսկ և իսկ նա, սակայն առանց նայելու ինձ վրայ, առանց մի խօսք ասելու, հեռացաւ:

Ես կծեցի ձեռքս՝ համոզուելու համար, որ երազ չէ. նոյն աչքերը, նոյն մազերը, բերանը, նոյն պարանոցը:

Ամեն օր նոյն ժամին գնում էի նրա գերեզմանի մօտ, ժամերով սպասում, յուսալով, որ կրկին կը պատահեմ նրան, բայց նա չը կար, տմեն տեղ ես նրան էի փնտուում, ամեն տեղ աչքիս առաջին նա՛ էր իր մեղմ, հիւանդ ժպիտով:

Վեց օր էր անցել նրան հանդիպելու օրից, բայց նա չը կար. ես արդէն սկսել էի յուսահատուել, որ էլ երբէք չեմ տեսնելու և սկսել էի կասկածել,

արդեօք դա հալիւցինացիա չէր, որ երեւաց իմ վառուած երևակայութեան մէջ:

Քանի օր է պատրաստւում եմ գնաւու, բայց միշտ այսօր-վաղն եմ ձգում...

Բայց վաղը անպալման գնում եմ:

Ես չը գիտէի, որ այսքան վատ կը զգամ ինձ այստեղ: Ինքս էլ չը գիտեմ, ուր եմ գնալու... միւնոյն է թէ ուր, միայն թէ հեռու այստեղից:

Վաղը գնում եմ:

Նորից տեսայ նրան: Նա ուրուական չէ: Պառկած էի կանաչ խոտերի վրայ, գիրքը մի կողմ էր ընկած. ինչու էի վերցրել՝ չը գիտեմ, միւնոյն է, կարդալ չէի կարող: Մի քանի անգամ փորձել էի սկսել, մի քանի անգամ կարգացել էի նոյն տողերը, բայց ոչինչ չէի հասկացել...

Ես պառկած էի աչքերս փակ և լանկարծ ինձ թուաց, թէ ես մեռել եմ, որ դրւած եմ դագտղի մէջ, բայց ոչ ոք չի լալիս... Ես նստեցի, որ ցըսմ այդ լի-

մար մտքերը: Նալեցի շուրջս, նալեցի երկնքին, այնպէս ջինջ կապոյտ էր, ոչ մի ամպի կտոր. ծառերի տերեւները նոր լողացած մանկան նման թարմ, կասես, ժպտում էին...

Ես յանկարծ լիշեցի, որ պէտք է կապեմ իրերս, արագ բարձրացայ և սկսեցի իջնել: Տասը քայլ հազիւ էի անցել, երբ յանկարծ թփերի միջից դուրս եկաւ նա: Ինձ թւաց, թէ ես իսկոյն կընկնեմ, աչքերս սկանում էին, մի վայրկեան սիրտս գադարեց բարախելուց:

Վերելքից լոգնած, նա, կարծես, ճիզեր թափում բարձրանալու համար:

Նա ինձ չը նկատեց, ուժառապառ լենուեց մի ծառի և փակեց աչքերը կուրծքը բարձր ու ցածր էր անում, մի վայրկեան ես լուս նալեցի նրա վրայ, ուզեցի մօտենալ, հարցնել, բայց դժուարանում էի, նա անշարժ կանգնած էր:

—Օրիորդ, ձեզ ինչ պատահեց, — արագ մօտենալով հարցը ես:

Նա բացեց աչքերը, նալեց և դարձեալ փակեց, ձեռքով մի նշանաբաւ՝ որ ոչինչ:

Մի քանի վայրկեան մենք լուռ կանգնած էինք իրար հանդէս, ես չեմ վըստահանում խօսել:

—Ոչինչ, կանցնի...—ասաց նա բանալով աչքերը,—խնդրեմ նեղութիւն կրէք կանչել քրոջս, նա այնտեղ է, ծաղիկներ է ժողովում,—նա մատով ցոլց տւեց մօտիկ դաշտավայրը:

—Ես իսկոյն կը կանչեմ. դուք նստեցէք:—Ես փնտոեցի վերարկուս խոտերի վրայ, օրիորդը չը ստիպեց խնդրել, նստեց ու երկու ձեռքով ծածկեց դէմքը:

Ես վազեցի կանչելու քրոջը, որը մեղանից մի քիչ հեռու ծաղիկներ էր ժողովում: Մի տասը տարեկան աղջիկ էր նա, օրը նկատելով, որ մէկը դէպէ իրանէ գնում, դադարեց ծաղիկներ հաւաքելուց և վախեցած նայում էր ինձ: Երբ ես մօտեցայ, զարմացած նկատեցի, որ բոլոր ծաղիկներն էլ սպիտակ են:

—Օրինք...

Նա վախկոտ մի հայեացք ձգեց ինձ վրայ և հարցական կերպով նայում էր ինձ:

—Զեր քոյրը ձեզ կանչում է...

—Որտե՞ղ է նա:

—Այնտեղ, այն ծառի տակ...

Երբ մենք մօտենում էինք, ես զարմացած և ուրախացած նկատեցի, որ նա ժպտալով մեզ է նայում:

—Դու ինձ կանչել ես:

—Ոչո:

—Ի՞նչ էիր ուզում:

—Ի՞նչպէս էք, —դիմեցի ես նրան:

—Ոչինչ, անցաւ, լոգնել էի... Ներեցէք, որ ձեզ անհանդատացրի:

—Ինձ ինչու ես կանչել...

—Ոչինչ. մի քիչ վատ զգացի, պարոնք օգնեց ինձ, շնո՞րհակալ եմ, —նանալեցինձ մի մելոմադոս ժպիտ զըթում. Ներին:

Ցէժմ լաւ էք:

—Միանդամախ:

—Ա՛յ ես իսկոյն կը վերջացնեմ պատկը—ասաց փոքրիկ աղջիկը ու վազեց նորից ծաղիկներ հաւաքելու:

—Ինչու էք կանչնել.—մի փոքր լուռթիւնից լետոյ հարցրեց աղջիկը:

—Դուք ժոյլ կը ամք:

Նա լուռ մեկնեց ինձ իր ձեռքը.—
Նստեցէք... Ես ձեզ մի անգամ էլ պա-
տահէլ եմ:

—Այս:

Ես ոչինչ չէի կարողանում ասել,
մտքերս շփոթւում էին...

—Դուք մենակ էիք:

—Այս, մենակ:

—Ի՞նչ էիք անում մենակ անտառում:

—Ես էլ չը գիտեմ, ընկած էի կա-
նաչի վրայ:

—Երեխ երազում էիք:

—Այս...

Ես անթարիթ նստում էի նրան. նա
կարծես նկար ոց այդ՝ և կախ ձգեց
գլուխւ...

Նրա մռալի, գունատ դէմքը, կրսաբաց
աչքերը...

Դժիքանի վայրկեան մենք լուռ էինք,
ես խօսք էի փնտուում ասելու, բայց
ոչինչ չէի գանում...

—Դուք առաջին արին է այստեղ էք.
Բնչակէս է դուրս գլիս, —նորից դէմեց
լւձ աղջիկը:

—Ոչ, եղել եմ հինգ տարի առաջ:
Ես որոշել էի էլ երեէք չը գալ, բայց...

—Ինչու, —ընդհատեց նա:

—Նատ ծանր լիշողութիւնների հետ
է կապուած այս ամառանոցը:

—Երսկի եկել էք քըքըլու հին վեր-
քերը: Կարելի՞ է իմանալ, այդ ինչ վեր-
քեր են: Ներեցէք որ հետաքրքրուում
եմ, չէ որ հին է, —ասաց նա ու
ժպտաց:

—Դա շատ տխուր պատմութիւն է:

—Եթէ գաղտնիք չէ՝ պատմեցէք. Ես
սիրում եմ լսել տխուր պատմութիւններ:

—Նա շատ նման էր ձեզ:

—Ո՞վ, —չը հասկանալով իմ այդ կերպ
սկսած պատմութիւնը՝ բացականչեց նա:

—Մի աղջիկ:

—Դուք սիրում էիք նրան... Իսկ
այժմ, իհարկէ, չէք սիրում:

—Նա մեռել է:

—Ներեցէք:

Այդ բոպէին վազելով մը ոեցաւ քոյ-
քը՝ մի սիրուն, սպիտակ ծաղկէ պսակ
ձեռքին:

Դը է

—Ահա պատրաստ է, նայիր ինչ
լաւն է:

—Բայց ինչու բոլորը սպիտակ ծա-
ղիկներից—հարցը եռ աշխատելով ժըպ-
տալ:

—Դա այնքան սազում է Սօֆիին,
ապա նայեցէք:

Նա ծունկ չոքեց քրոջ տռաջ, հագ-
ցըրեց պսակը քրոջ գլուխը, ուղղեց
պսակի տակից մազերը ու ժպտաց:—
Տեսէք, ինչ լաւ է:

—Դուք լաւ ճաշակ ունիք—ասացի
ես հազիւ զսպելով լուզմունքս, զգում
էի, որ այլևս չեմ կտրողանում զսպել
ինձ. «Ճաղիկների թագուհին» կենդա-
նացել էր:

—Զեր քոյրը չի սխալում. սպիտակ
ծաղիկները ձեզ շատ են սազում:

—Եսորհակալ եմ՝ կոմպլիմենտի հա-
մար:

—Ես կոմպլիմենտներ ընդհանրապէս
չեմ անում:

—Եւ լաւ էք անում... նայեցէք ինչ
նուր աղին է—ասաց նա՝ կտրելով մի

կտրտաւուն ծաղիկ:—Բոլորովին նման
չէ վայրի ծաղկի... Սա ձեզ՝ լիշտատակ
մեր այս պատահական ծանօթութեանը.
այժմ դէպի տուն,—մայրիկը հիմա ըս-
պասում է. դուք կիջնէք:

—Այո:

—Լուսիկ, գնանք:

Մենք սկսեցինք իջնել: Օրիորդը լեն-
ւել էր իմ թեկին և իջնում էր իմ օգ-
նութեամբ: Ես զգում էի նրան ինձ
մօտ, ձեռքի ջերմութիւնը... ինձ թւաց
թէ դա նա է, կենդանացել է և ես
նորից թեկիս կռնթաց՝ տանում եմ նրան:

—Է՛, մի քիչ հանգիստ—ասաց նա
թողնելով թես և ընկաւ մօտիկ մի
նստարանի վրայ:

—Դուք գեռ պահում էք այդ ծա-
ղիկը—յանկարծ զարձաւ նա ինձ:

Ես ակամայ նայեցի ծաղկին:

—Նա արդէն թառամել է, խեղճ
ծաղիկ:

—Ինչու խեղճ:

—Դուք նրան ձեր ձեռքում պահում
էք, ինչպէս մի հիւանդ, վիրաւոր թըռ-

չուն, միւնոյն է նա չի ապրի:
Ես նրանց տուն հասցրի:
—Ուրախ եմ ձեզ հետ ծանօթանա-
լու, ասաց նա թոթովելով ձեռքս:

Զը գիտեմ ինչ պատասխանեցի, չը գի-
տեմ ինչպէս տուն հասալ... երջանկու-
թիւնից ես պատրաստ էի ճշալ... Ես
նորից գտալ նրան... գտալ:

Ամեն օր պատահում եմ նրան: Մենք
միասին գնում ենք հեռուները: Այսօր
ես նրան ամբողջ օրը չեմ տեսել. երեք
անգամ եղել եմ նրանց տան մօտերը:
Վերջին անգամ երբ միասին էինք, նա
աւելի գունատ էր, տիսուր... Մի քանի
անգամ ուզեցի բաղխել գուռը, հարցը-
նել նրա առողջութիւնը—գուցէ նա
հիւանդ է,—ես գողում եմ այդ մտքից:

Արդէն մութը ընկնում էր և ես յու-
սահատուեցի, որ էլ չեմ կարողանալու
նրան տեսնել:

Վաղը շաբաթ է. ես գիտէի, որ ամեն
շաբաթ երեկոյ նա գնում է գերեզմա-
նատուն, ու ո՞մն վաղը կը տեսնեմ:

Սյու միտքը, որ վաղը կը տեսնեմ,
ինձ մի փոքր կազդուրեց և գնացի
տուն:

Ոչինչ չեմ կարողանում անել, պառ-
կում եմ, փակում աչքերս. նա է ամեն
տեղ, նա է...

1001
1000

Ժամը հինգից ես սպասում էի նրան,
բայց վեցից անց էր, նա չը կար: Իսկ
եթէ այսօր էլ չը տեսնեմ, միւնոյն է
ես կը գնամ նրա մօտ: Նարունակ աչ-
քերս յառած դռանը, որտեղից պիտի
գար նա, սպասում եմ... Ինձ թւաց, որ
ես նոր եմ կորցրել նրան, որ այս մէկն
էլ, ինչպէս մի խաբուսիկ երազ, կան-
ցընի, ինչպէս մի մէտէօր կընկնի և ես
նորից կը մնամ միայնակ:

Նա չը կայ... Ես սկսում էի յաւսա-
հատուել, երբ նկատեցի, որ սպիտակ
ծաղկեփունջ ձեռքին նա գտիս է: Բար-
ձրաւանդակի վրայ նա մի վայրկեան
կանգ առաւ, նայեց շուրջը, խորը շունչ
քաշեց և էլի առաջ շահում եց: Ես ու-
զում էի ճշալ, գուռալ ամբողջ ձայնով...



Նա գալիս է գէպի ինձ, գէպի իմ ծառը, որից մի քիչ հեռու կանգնած էի ես: Դլուխը կախ, նա մօտենում էր, ես լսում էի սրտիս զարկը...

—Բարե ձեզ:

Նա ցնցուեց, բարձրացրեց գլուխը, նայեց ինձ. գլխի շարժումով պատասխանեց բարևիս, լուռ մօտեցաւ գերեզմանին, համբուրեց գերեզմանի քարը, թափեց ձեռքի ծաղիկները գերեզմանի շուրջը և գլուխը ձեռքերի մէջ առած՝ նստեց հարեան տապանաքարի վրայ:

Ես լուռ նայում էի նրան, մի յանկարծակի միտք ծագեց գլխումս, որ մինչև այժմ ես չէի մտածել և որը շատ պարզ էր:

—Ինչու էք եկել այստեղ,—երկար լուսթիւնից լետոյ՝ դարձաւ ինձ աղջիկը:

—Ես... ես ամբողջ երկու օր է չեմ տեսել ձեզ, ես գիտէի, որ դուք կը գաք, ես եկայ ձեզ տեսնելու:

—Լուռ... կոճաց... մի խօսէք այդպէս... նա կը լսի:

—Ո՞վ:

—Քոյրս... Խորն է թաղուած, բայց այս ծառը կը պատմի նրան, լուռ: Գիտէք ով է տնկել այս ծառը:

—Այո... գիտեմ... Ես:

Նա արագ ոտի ելսու, վախեցած, լայնացրած աչքերով նայեց ինձ, կարծես ուրուական էր տեսնում իր հանդէպը:

—Պուք:

—Այո, հինգ տարի առաջ:

Նա լուռ բանեց ձեռքս, նրա աչքերում երեւացին արցունքներ. Նա աշխատում էր խեղգել հեկեկանքը, բայց անկարող էր զսպել... Թողեց ձեռքս. մի ձեռքով գրկեց գերեզմանաքարը, միւսով ծածկեց գէմքը,—

—Ների՞ր... ների՞ր... քոլրիկ, —շշնչաց նա արագ շարժումով, ետ ձգեց գլուխը, սրբեց աչքերը և առանց ոչինչ ասելու՝ սկսեց արագ իջնել: Ես քարացած էի տեղումս, ուզում էի կանչել, բայց ձայնս խեղգւում էր...

Նա գնում էր առանց ետ նայելու, գնաց առանց մի խօսք տակելու, նա

արդէն գուրս էր գալիս դռներից, լետ
չը նայեց, գնաց...

Այսօր երրորդ օրն է, որ նրան չեմ
տեսել...

Վաղուց է, որ ես լաց չեի եղել,
այսօր լաց եղայ և ինձ թուաց թէ ար-
ցունքներիս հետ թափուեցին և բոլոր
տանջանքներս. մի ըսպէ ես ինձ ալն-
պէս թեթև զգացի, ինքս ինձ վրայ ծի-
ծաղեցի, բայց դա միմիայն մի ըսպէ էր:
Այժմ ես նորից տանջւում եմ. ինչ
մտքեր, ինչ կասկածներ ասես, որ չեն
պաշարում ինձ. երբեմն ինձ թւում է,
որ ես խելագարում եմ:

Այսօր ես տեսայ, բայց նա հազիւ
պատասխանեց բարեիս: Երբ ուզեցի մո-
տենալ, նա համարեա փախտւ:

Երեկոյեան, հանդիսեցի քրոջը, որը
ինձ տեսնելով՝ մօտեցաւ և ասաց, որ
քոյլը ինդըց երեկոյեան գնամ իրենց
մօտ:

Ինչ դանդաղ են անցնում ժամերը:
Ամբողջ օրը ես թափառել էի անտա-
ռում, բարձրներն էի գնացել, ուր մի-
միայն ես էի... Այսօր ես կը տեսնեմ
նրան—այդ միտքը լցրել էր սիրաս
անհուն հրճուանքով... այսօր ես նրան
կասեմ, որ սիրում եմ. ես այլես անկա-
րող եմ ծածկել այդ:

Կէս ժամ էր մնում, որ ես տանից
գուրս եկայ և դիմեցի գէպի նրանց
ամառանոցը:

Երբ ես ներս մտայ բակը՝ նա նստած
պատժգամբում կարդում էր. ինձ նկա-
աելով նա թողեց գիրքը և արագ իջաւ:
—Դուք բարկացած էք ինձ վրայ:

Ես լուռ էի, ոչինչ չեի գտնում ա-
սելու:

—Ներեցէք,—շարունակեց նա,—ես
չեի կարող տեսնել ձեզ:

Ես պէտք է հարթէի այն տպաւո-
րութիւնը, որ կօշմարի պէս ծանրացել
էր հոգուս վրայ...

Մենք լուռ անցանք պատժգամբը:

Նա առաջարկեց նստել։ Մօտ մի ըոպէ
լուռ էինք, նա կախ էր ձգել զլուխը,
ես նայում էի նրան. գլխումս միայն մի
բան կար և ես ուզում էի գոռալ՝ «սի-
րում եմ ձեզ»։ յանկարծ նա անսպասելի
բարձրացրեց զլուխը և հարցրեց։

—Կուզէք տամ ձեզ ձեր նամակները։
—Ո՛չ, ոչ այլեցէք... ալրեցէք։

—Այրել նամակները։ Եթէ գիտենա-
լիք ինչպէս էի պահում... Ես ապրել
եմ նրանց հետ, ես ձեզ ճանաչում էի
առաջ քան կը տեսնէի, դուք ապրում
էիք իմ երեակայութեանս մէջ և ես
սպասում էի, որ մի օր կը գաք և ահա
պատահեցի։

—Դուք դժգոհ էք։

—Այո... Գիտէք երբ ես ուզում եմ
լաց լինել՝ կարգում եմ ձեր նամակնե-
րը. նրանք այնքան լաւ են գրւած,
անկեղծ... Ինձ թւում էր, որ դա իրա-
կանութիւն չէ, այլ մի վազուց կար-
գացուած, մոռացուած վէպից է։

—Դուք այդպէս չէիք երեակայում։
Դուք ձեր երեակայութեան մէջ ստեղ-

ծել էիք մի հերոս, բայց այժմ տես-
նում էք, որ ձեր ալդ իդէալացրած
մարդը սովորական մի մահկանացու է,
որը ոչ սպանել է իրեն, ոչ արեղայ
դարձել... Այս, ալո՞—ես լոկ մարդ եմ
և ես նորից սիրում եմ, սիրում եմ ձեզ։

—Լուռ, խնդրում եմ ոչ մի խօսք։
նա գունատուած ոտքի կանգնեց։

—Սիրում եմ ձեզ... շշնչացի ես,
այլես չը կարողանալով սեղմել կրծքիս
տակ ալդ ճիշը։

—Դուք ուրիշ սէր էք փնտում...
Խոկ ձեր նամակները... քննիրս։

—Չը գիտեմ, չը գիտեմ. երբ առա-
ջին անգամ տեսալ ձեզ այնտեղ, գերեզ-
մանատանը, նրա գերեզմանի մօտ, ինձ
թուաց, թէ դուք նրա ուրուականն էք
և բնութիւնը իմ երկար տանջանքների
համար վերադարձնում է նրան ինձ,
միթէ դուք իմ առաջին հայեցքից չը
զգացիք, որ սիրում եմ։

—Չըխօսենք... խնդրում եմ... Ես ձեզ
սիրել չեմ կարող. դուք էլ ինձ չէք սիրում.
դա մի ժամանակաւոր յափշտակութիւն է։

—Ես ձեզ սիրում եմ...
 —Սիրում էք նրան... Իմ մէջ դուք
 նրան էք փնտռում, ձեր անցած, թո-
 ղած սէրը. ես էլ, երբ չէի տեսել ձեզ,
 սիրում էի, բայց այժմ ոչ: Ով կարո-
 ղացել է մի անգամ ուժեղ զգալ այդ
 զգացմունքը, նա էլ չի կարող նոյնը
 կրկնել: Զը խօսենք դրա մասին. ինձ
 թւռում է, որ նա կանգնած է դռան
 մէջ և տեսնում, լսում է մեզ... Նա
 գերեզմանումն էլ հանգիստ չի լինի:
 Ես էլ ձեզ սիրում եմ, բայց ոչ նրան,
 որ տեսնում եմ ինձ մօտ այժմ, այլ
 նրան, որին ես ստեղծել էի ինձ համար...
 Սեղմենք իրար ձեռք և բարեկամ-
 ներ լինենք... Մեզ չեն սիրում, մեր
 մէջ փնտռում են իրենց հոգու ստեղ-
 ծածը, բայց չէ որ հոգին շուտ կը գայ,
 որ դա նա չէ և էլի կը սկսէ փնտռել:
 Նա մեկնեց ինձ իր ձեռքը:

—Դէհ:

—Սիրում եմ—համարեա ճշացի՝ ու-
 թիշ ոչինչ չը կարողանալով ասել:
 —Գնացէք... գնացէք, մենք չը պէտք

է միմեանց տեսնենք. խնդրում եմ,
 եթէ իրօք սիրում էք, գնացէք, հեռա-
 ցէք ալստեղից. գուցէ նորից մի օր կը
 հանդիպենք, այժմ ես ձեզ չեմ կարող
 սիրել.—նա արագ անցաւ միւս սենեա-
 կը. ես մեքենաբար հետեւցի նրան, նա
 ընկալ գտհաւորակի վրայ և հեկեկում
 էր: Ես մօտեցալ, նա բարձրացրեց գը-
 լուխը և ճչաց՝ գնացէք... գնացէք—
 շշնջաց նա արցունքների միջից՝ աւելի
 մեղմ բռնելով ձեռքս,—գնացէք—կրկը-
 նեց նա՝ թաշկինակը սեղմելով տչքերին
 —ես խլում եմ քրոջիցս նրա սէրը:

Ես չոքեցի նրա առաջ, արցունքները
 խեղդում էին ինձ. նա գլուխը թեքեց
 կրծքիս և լուռ հեկեկում էր:

—Դու սիրում ես,—ուզում էի ճչալ,
 բայց ձայնս խեղդում էր կոկորդումս:

—Դէհ, գնացէք... գնացէք...—եր-
 կար նա նայեց աչքերիս և ընկալ գիրկոս:

Նա իմն է... Ես նրան սիրում եմ,
 մահն էլ չի կարող խել նրան ինձանից*
 Ես փախալ նրա մօտից, փախալ որ նա
 չը տեսնի իմ արցունքները: Ես կարող

Եի հիստերիկ կերպով լաց լինել, ես
պահանջ էի զգում երեխալի նման հե-
կելալու:

Հարբածի նման եմ: Ամբողջ գեշերը
չեմ կարողացել քնել. որքան աշխատե-
ցի ոչնչի մասին չը մտածել, քնել, որ
այս անտանելի գիշերը աննկատելի անց-
նի, որքան աւելի էի տանջւում՝ որ չեմ
կարողանում քնել, այնքան քունը աւե-
լի էր փախչում աչքերիցու:

Ես վեր կացար, ուզեցի գրել լիշա-
տակարանումս, վերցրի գրիչը. կես ժամ
նստած էի տետրակի առաջ և ոչինչ
չը գրեցի... Երջանկութիւնից ես հար-
բել եմ:

Արդէն լուսանում էր, երբ կարողա-
ցայ փակել աչքերս, իսկ երբ բաց արի՝
արդէն կէս օր էր: Առաջին միտքս նա
էր. ես արագ վեր ցատկեցի անկողնից,
հագնուեցի և շապապով գուրս եկար:

Արդեօք կը գալ նա. այսօր կը տես-
նեմ նրան...

—

Ամբողջ օրը թափառում էի, բայց
չը տեսալ. վաղը առաւօտ կը գնամ,
կը բաղինեմ գուռը:

Ժամը տասն էր, երբ ես կանգնած
էի նրանց տան առաջ և սպասում էի
գուան բացուելուն:

—Ինչ լաւ որ եկաք, երեկ ամբողջ
օրը փնտուեցի ձեզ, բայց ոչ մի տեղ
չը սպատահեցի, —ասաց քոյրը՝ երբ բա-
ցեց գուռը.

—Դուք նամակ ունիք Սօփիից:

—Նամակ...

—Այո՛, ես իսկոյն կը բերեմ:

—Նա տանն է...

—Ոչ, նա երեկ առաւօտեան գնաց:

—??!

Աղջիկը ներս վազեց նամակը բերելու:

—«Գնաց»... «Նամակ»:

—Ահա նամակը և ծաղիկները:

Ես մեքենայաբար վերցրի նամակը և
ծաղիկները և առանց ոչինչ ասելու,
համարեա վազելով, հասայ անտառ.
մտայ անտառի խորքը, որ ոչ ոք չը
տեսնի ինձ, ընկայ խոտերի վրայ...

Երկար ես չեի կարողանում բաց անել
նամակը:

«Պարօն,—գրում էր նա,—ես չըկամ,
ես նրա ուրուականն եմ: Ես սիրում եմ
ձեզ, դուք այդ գիտէք, բայց ես վա-
խենում եմ կորցնել ձեզ, ուստի և
փախչում եմ: Ես գնում եմ X քաղա-
քը. ուր կը գնամ այնտեղից՝ ինքս էլ
չը գիտեմ. ես կաշխատեմ թագնուել,
որ դուք չը գտնէք ինձ: Սիրենք իրար
հեռուից: Չը փնտռէք ինձ: Այս սպի-
տակ ծաղիկները թող նշան լինեն իմ
սիրուս... Այս ծաղիկները ձեզ էլի շատ
բան կը պատմեն. կը պատմեն և նրա-
նից, ձեր առաջին սիրուց... Մոռացէք
ինձ. ոչ, դա կեղծ կը լինի, չը մոռա-
նանք. սիրենք իրար հեռուից: Մենք
հազիւ ճանաչում ենք իրար, բայց ես
ձեզ սիրում էի դեռ չը տեսած: Երբ ես
կը հաշտուեմ՝ որ կարող եմ բաժանել
սէրս քրոջս հետ, կոմ խլել, գողանալ
նրանից՝—ես կը գտնեմ ձեզ: չե՞ որ
դուք ինձ սիրելով, սիրում էք նրան:
«սպիտակ ծաղիկների թագուհուն»: Ես

լաւ լիշում եմ, ինչպէս դուք տվալլուե-
ցիք, երբ տեսաք իմ զլխին սպիտակ
ծաղկեպսակը: Ես աշխատում եմ լոեց-
նել սրտիս ձայնը և լսում եմ միայն
ուղեղիս և նա ինձ ասում է—գնա,
քանի ուշ չե...

«Ներեցէք... չը գիտեմ՝ գուցէ մնաք
բարով, գուցէ ցըտեսութիւն... Յիշեցէք
ինձ, և ես կապրեմ: Քրոջս գրած ձեր
նամակները ես ալրեցի:

Աղաչում եմ, չը հետևէք ինձ:
Սօֆի»

Ես չեի կարողանում կարգալ. մի
քանի անգամ սկսեցի, բայց յամառ ար-
ցունքները խեղում էին ինձ. ես սեղ-
մեցի ծաղիկները շըթունքներիս և եր-
կար լալիս էի:

Ես ալես չեմ կարող մնալ այստեղ:
Ես գնում եմ... ուր... չը գիտեմ:

Մենք կարուեցինք ափից: Երբորդ
գանգից յետոյ կամուրջը, որ մեզ կա-

պում էր ցամաքի հետ, վերցրին։ Շոգենաւը մի անգամ էլ սուլեց, սկոտեց սլորուել և ապա արագ փախաւ տփից դէպի բաց ծովը։ Մի քիչ անց, թուաց թէ ափում կապուծ նտւակներն են, որ արագ փախչում են մեզանից, իսկ մննք, մեր նաւը, ամուր մեխուած ենք նոյն տեղում։

Նաւահանգստում կանգնած մարդիկ հետպհետէ փոքրացան, նրանց ձայները կամաց-կամաց անլսելի դարձան։ Ես կանգնած էի տախտակամածի վրայ, արդէն մթնում էր և յանկարծ ինձ այնպէս մենակ զգացի, մենակ այդ հսկայ ծովում։

Ճակերն էլ գնացին քնելու, նրանք էլ երևի յոգնեցին։

Դեռ երեսում են կրակները. ծովը հանդարտ է, բայց այդ անդորր խաղաղութեան մէջ մի ինչ որ վիթխարը սարսափ կալ... լուսնի շողերը, կասես, ժպտում են, համբուրում ալիքները և ձուլում այդ մեղմ ծփանքին։

Մեր նաւի ծանրութեան տակ ճըն-

շուած ալիքները, կարծես, հառաջում են, կատաղած բաշը թափ տալով փախչում են նաւի եզերքից և ապա նորից հեալով միանում իրենց յեղեղուկ քոյրերին։

Ես կանգնած երկար լսում եմ ծովի հեքը։ Ափերը կորել են, ամեն տեղ ծովն է սև ջրերով և ոսկեզօծուած լուսնի լուսով։

Արդէն ուշ է. բոլորը քաշուել են երանց խցերը, բոլորը քնած են. ես եմ տախտակամածի վրայ և մի քանի նաւաստիներ։

Բարի գիշեր, ծով։ Ես կը հանգստանամ, բայց դուք էլի կը շարունակէք վշալ իմ ոտքերի տակ. ես ականջ կը դնեմ ջրերի ողբերին, լուռ կը լսեմ նրանց պատմած գաղտնիքները։

Բոլորը հանգստանում են։

Նա էլ, որ ինձ այնպէս անողոք կերպով տանջել է, որին սիրում էի, նա էլ, որ չեկաւ ինձ ծովին յանձնելու, նա էլ քնած է իր փափուկ, սպիտակ անկողնում։ Բարի գիշեր...

Թուք դեռ չէք հանգստացել։ Ես էլ
չը կարողացայ հանգստանալ, պառկած
տեղս ես լսում էի ձեր հեքը, ես չը
կարողացայ հանգստանալ։ Ի՞նչ էք ա-
սում. Բնձ էք կանչում. ահա նորից
եկալ ձեզ մօտ, ձեզ հետ լինելու։ Մար-
դիկ քնած են, բայց ես քնել չեմ կա-
րողանում, ես հիւանդ եմ... սիրուց։

Լուսինը ի՞նչպէս գունատուել է,
ի՞նչ խոնաւ է տափտակամածը՝ ծած-
կուած ցօղով. ցուրտ է։

Ես գողում եմ ամբողջ մարմնով...

Մի կողմը լուսինն է, դժգոյն, գու-
նատ, նա մօտենում է իր լեզեղուկ
գերեզմանին, իսկ միւս կողմից հորիզոնը
շառագունել է արշալոյսը... լուսանումէ։

Ծնվ, եկ սիրենք միմիանց...

Արտապուած է «Գեղարուես»-ի № 3 գրքից։

13211

Հոյս են տեսել հետեւալ աօխառորիւնները
ԿՍՔԻՉՆԵՐ · · · · · զինն 5 կ.
ԿՍՔԻԵՆԵՐ · · · · · > 40 >
ՊԱՏՄՈՒԱՐԻՆԵՐ · · · · · > 5 >
ԳՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԷՏԻՒԴՆԵՐ > 35 >

Գիշե է 20 ԽՈՊ.